Ազդարարության փող

Trumpet's Sound

54-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎՍՏՐԱԼԻԱ
ՆՈՅԵՄԲԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույումճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բարի Հովիվը ..... Հովիվ՝ Հրաչ Գույումճյան

Տե՛ր, ոչ թե իմ, այլ՝ Քո կամքը ..... Հովիվ՝ Հրաչ Գույումճյան

Ավելի շատ զվարճանքի կարիք չունենք ..... Վեր. Հովսեփ Հովսեփյան

Տերը մեր Հովիվը ..... Վանիկ եղբ. Հադադյան

Սաղմոս 5. ..... Դոն Սթորմր

Հազարամյա սուրբ քաղաքը,
Կենաց գետը և փակման պատգամներ (1). ..... QMBC պաստորամա

Անցյա՞լ, թե՞ ապագա ..... Նեյլ Բուքման

Հոբ (2) ..... Դոն Սթորմր

Բարձրյալի ծածկոցի տակ ..... Քաղված

Համագործակցության առաքինությունը ..... Քաղված

Խաղաղություն եմ թողնում ձեզ ..... Անժելա Հարությունյան

Բարի Հովիվը

Հիշում եմ մի քանի տարի առաջ հայրենիք կատարած այցս, երբ որոշեցի հովիվ գտնել ու նրան երկու հարց ուղղել: Երկար ճանապարհ վարեցինք մեքենան, բայց չհանդիպեցինք որևէ հովվի: Հայաստանում մնալու օրերս գրեթե ավարտին էին հասել, բայց փառք եմ տալիս Տիրոջը, որ վերջին օրերում մի բլրի վրա հովիվ տեսա: Վարորդին խնդրեցի կանգ առնել և այդ բլուրը բարձրացա: Խեղճ հովիվը զարմացած նայում էր, թե ինչու է անծանոթը շտապում իր հետ հանդիպելու: Ես մոտեցա նրան և ասացի.

- Աստվածաշնչի մասին երկու հարց ունեմ ձեզ տալու: Նախ՝ Հիսուսն ասաց. «Ես եմ բարի հովիվը»: Դուք բարի՞ հովիվ եք: Ի՞նչն է ձեզ բարի հովիվ դարձնում:

Խեղճ մարդը դեմքիս նայեց ու մի պահ մտածեց: Իմ հարցը շատ լուրջ ընդունեց, այնուհետև պատասխանեց.

- Ես բարի հովիվ եմ:

Ես հարցրի.

- Ի՞նչն է ձեզ բարի հովիվ դարձնում:

Նա պատասխանեց.

Տեսե՛ք, այս հոտի բոլոր ոչխարներն իմը չեն: Նրանցից մի քանիսը հարևանինս են, բայց ես բոլորի համար հավասարապես հոգ եմ տանում: Ուստի կարծում եմ, որ բարի հովիվ եմ:

Ես ասացի, որ ուրախ եմ այսպիսի բարի հովվի հետ հանդիպելու համար, բայց շարունակեցի՝ ասելով.

- Ես մի հարց էլ ունեմ: Տեր Հիսուսն ասել է. «Բարի հովիվը իր կյանքը ոչխարների համար է տալիս»: Արդյո՞ք Տերն ուզում է ասել, թե բարի հովիվ կոչվելու համար պետք է ձեր կյանքը ոչխարների համար դնեք:

Նա մի պահ լուռ մնաց: Լրջորեն մտածեց, ապա բարձրաձայն ծիծաղեց՝ ասելով.

- Ո՛չ, ո՛չ, ես երբեք այս ոչխարների համար կյանքս չեմ տա:

Միայն Հիսուսն է Բարի Հովիվը: Նա եկավ կորածին փնտրելու ու փրկելու համար: Մեծարի՛ր Նրան: Նա Իր կյանքը տվեց, որպեսզի փրկվենք: Հիշե՛ք, որ փրկության այս դուռը լայն բաց է նաև ձեզ համար: Եկե՛ք Հիսուսի մոտ, եկե՛ք հիմա:

Հ. Գ.

❊ ❊ ❊

Տե՛ր, ոչ թե իմ, այլ՝ Քո կամքը

Հետաղարձ հայացք նետելով՝ տեսնում ենք, թե ինչպե՞ս Տերը առաջնորդեց մեզ: Տեսնում ենք, թե ով է վերահսկողը, ղեկավարողն ու առաջնորդողը: 2024 թվականին ACM-ը դառնում է 26 տարեկան: Մենք մուտք ենք գործում անորոշություն, բայց Տերը շնորհալի է:

Մեր առաքելությունը աղքատներին Ավետարանը հասցնելն է: Մեր մտքով երբեք չէր անցնի, որ մի օր շուրջ 120,000 արցախահայ՝ որպես փախստական, Քրիստոսի կարիքը կունենար: Մեզանից շատ ջանք էր պահանջվում, հատկապէս Հայաստանում գտնվող մեր գործընկերներից, ովքեր կարիքավոր մարդկանց հագուստ և սնունդ մատակարարեցին, կացարան և խորհրդատվություն տրամադրեցին: Նրանք Ավետարանը հասցրին բազմաթիվ տեղահանված երեխաների: Ընտանիքների մեծ մասը պատերազմում կորցրած հարազատներ ունեին:

Իրավիճակը ծանր է, բայց Տերը վերահսկում է ամեն բան: Նա հպվում է շատ սրտերի, սրբում շատ արցունքներ և Իր Անձը հայտնում շատերին: Ձեր աղոթքները կարևոր են մեզ համար: Մենք կարիք ունենք իմաստության և Սուրբ Հոգու առաջնորդության:

Հ. Գ.

Ավելի շատ զվարճանքի կարիք չունենք

Շատերը կարծում են, թե քրիստոնեական կյանքի և Ավետարանի չափանիշները աշխարհի համար ցածրացնելով՝ կկարողանան ավելի արդյունավետորեն ավետարանել աշխարհին, և այդպիսով՝ մարդիկ ավելի հեշտությամբ կընդունեն Քրիստոսին ու կդառնան քրիստոնյաներ:

Նրանց կարծիքով՝ քրիստոնեությունը որքան ավելի մոտեցնես աշխարհին, այնքան ավելի կմեծանա այն հավանականությունը, որ աշխարհը կընդունի Հիսուս Քրիստոսի Ավետարանը: Նրանք համոզված են, որ մեղքի, դատաստանի, դժոխքի և սրբության մասին չխոսելու դեպքում մարդիկ կուզենան միանալ եկեղեցուն: Կոպիտ կամ քաղաքական առումով ճիշտ չհնչող բաները նրանց կողմից չեն հիշատակվում կամ դրանց այլ մեկնաբանություններ են տրվում:

Այդ քրիստոնյաները չեն գիտակցում, որ մարդիկ հոգնած են այս անաստված աշխարհի փուչ խոստումներից և ստերից: Եթե մարդիկ չուզենային, որ իրենց կենսակերպը փոխվեր, եթե նրանց չհետաքրքրքրեին Աստծո չափանիշները, դժոխքն ու դրախտը, ապա ինչո՞ւ պետք է ուզենային որևէ եկեղեցու միանալ կամ կրոնի հետևել, որն իրենց ունեցածից ոչնչով չի տարբերվում:

Վերջերս եկեղեցու առաջնորդների և սպասավորների հետ հանդիպման ժամանակ, երբ ես խոսում էի սրբության կարիքի, կարգապահ կյանքի և երիտասարդությանը սրբության մասին սովորեցնելու թեմաներով, ինձ ընդհատեցին և ասացին, որ սխալ եմ մտածում. «Այսօրվա երիտասարդությունն ավելի շատ զվարճանքի և ակտիվ գործողությունների կարիք ունի, քան սրբության մասին ճառերի: Եթե դուք դա չհասկանաք, ապա ձեր եկեղեցին կկորցնի իր երիտասարդներին»:

Ես իհարկե գիտեի, թե ինչ է ասում Աստվածաշունչը, բայց հաջորդ օրը եկեղեցու երիտասարդներից մի քանիսին հարցրեցի՝ արդյոք նրանք կուզենան ավելի շատ զվարճալի միջոցառումների և ժամանցների մասնակցե՞լ, թե՞ շարունակել մեր աստվածաշնչյան, ավետա-

րանչության և սուրբ կյանքի թեմաներով դասերը: Նրանք պատասխանեցին. «Հովի՛վ, եթե մեզ ավելի շատ ժամանցներն ու զվարճանքները հետաքրքրեին, ապա մենք աշխարհում կմնայինք: Այնտեղ շատ ավելի զվարճանք կա, քան եկեղեցում: Բայց մենք չենք ուզում այն, ինչ աշխարհն է մեզ առաջարկում»:

Գործք Առաքելոց գրքում ճշմարիտ հավատացյալների կյանքը այնքան տարբեր էր, որ մարդիկ նրանց քրիստոնյա անվանեցին (Գործք 11:26): Նոր Կտակարանում քրիստոնյաներին «սրբեր»՝ զատվածներ էին անվանում:

Սուրբ կյանքից ավելի բարձր քարոզ չկա: Պատգամաբերի անսուրբ, մեղավոր կյանքը խեղդում է պատգամը:

Գործք 19-րդ գլխում հավատացյալները լրջորեն էին վերաբերվում քրիստոնեությանը: Նրանք խոստովանում էին իրենց սխալ արարքները, ոչնչացնում այն գրքերը, որոնք իրենց դարակներում այլևս տեղ չունեին, և Տիրոջ համար համոզիչ վկայություն էին ձեռք բերում:

Քո կյանքում կա՞ արդյոք մի բան, որը պետք է հաղթահարես: Երբ այսօր Աստծո առջև կանգնես, խնդրի՛ր, որ Սուրբ Հոգին քեզ ցույց տա այն առարկան, գաղափարը կամ մարդուն, որը խանգարում է քո հոգևոր աճին: Խնդրի՛ր, որ նա քեզ ցույց տա, թե ինչպես կարող ես Գործք 19-ի հավատացյալների նման քո կյանքից հեռացնել այդ արգելքը:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

❊ ❊ ❊

«Այս բաները ես ձեզ ասացի, որպեսզի չգայթակղվեք: Ձեզ իրենց ժողովարաններից դուրս պիտի հանեն, այո, ժամանակը գալիս է,որ ով ձեզ սպանի, պիտի կարծի, թե Աստծուն ծառայություն է մատուցանում: Եվ այս բաները ձեզ պիտի անեն, որովհետև նրանք Հորը չճանաչեցին, և ո՛չ էլ Ինձ: Բայց այս բաները ես ձեզ ասացի, որ երբ ժամանակը գա, դուք հիշեք, թե ես ձեզ ասացի դրանք: Եվ այս բաները սկզբում չասացի ձեզ, որովհետև ես ձեզ հետ էի» (Հովհ. 16:1-4):

Տերը մեր Հովիվը

Սաղմոս 23

Սաղմոս 23-ում Աստված ներկայացված է որպէս հովիվ, և Իր ժողովուրդը՝ որպես ոչխարներ: Այս Սաղմոսը գրված է ոչխարի տեսանկյունից:

Դավիթ թագավորը նկարագրում է Աստծուն որպես տիրոջ և հովվի: Հիսուսն ասել է. «Ես եմ բարի Հովիվը, և Ես Իմ ոչխարներին ճանաչում եմ և ճանաչվում եմ Իմը եղողների կողմից»: Դու ճանաչո՞ւմ ես Հիսուսին որպես քո անձնական Փրկչի: Հիսուսը քեզ ճանաչո՞ւմ է որպես Իր զավակի: Ո՞ւմ ես վստահում, երբ կյանքդ ալեկոծվում է, երբ անորոշությունները շատանում են: Ո՞ւմ ես դիմում: Արդյոք խնդրո՞ւմ ես, որ Նա կյանքդ կառավարի: Միայն այն ժամանակ կարող ես խոր վստահությամբ, գիտակցությամբ և հաստատ հավատքով ասել. «Տերը իմ հովիվն է, ես ոչ մի բանի կարիք չեմ ունենա, որովհետև ինձ խոտավետ արոտներում կպառկեցնի, հանդարտ ջրերի մոտ կառաջնորդի»:

Ոչխարը խելացի կենդանի չի համարվում, այլ՝ անմիտ, և այս պատճառով երբեմն շատ փոքրիկ բանից վախենում է, շփոթվում և իր հոտին տագնապի ենթարկում: Հովիվը բռնում է վախեցած ոչխարին, մեղմորեն դնում խոտի վրա և կամաց-կամաց հանդարտեցնում նրան: Դավիթն անձամբ հովիվ լինելով՝ հիշում է այս տեսարանը և ասում, որ Տերը նույն ձևով հանդարտեցնում է իրեն: Մեր առօրյա կյանքում նույնպես շատ անցուդարձներ խանգարում են մեզ ու արդյունքում՝ կորցնում ենք մեր հանգիստը: Ճիշտ այս պարագաներում, ինչպիսիք են անգործությունը, հիվանդությունը, ցավը, Տերը բռնում է մեզ ու հանդարտեցնում: Ոչխարը վախենում է վազող ջրերից: Նմանապես մենք, երբ կյանքի հոսանքի առջև ենք գտնվում, դժկամում ենք: Կարո՞ղ ես հիշել այն, ինչ պատահեց վերջերս, երբ կյանքի արագավազ հոսանքի առջև հայտնվեցիր, և Տերը հանդարտեցրեց: Տերը հետաքրքրված է մեր ֆիզիկական և հոգեկան վիճակով, զգացական բարեկեցությամբ, հանդարտությամբ և խաղաղությամբ:

Երբեմն ոչխարները հեռանում են ու մոլորվում արածելու ժամանակ: Հովիվը, թողնելով մնացած ոչխարները փարախում, գնում է մացառներում, փշերում բռնված ոչխարին ազատելու: Նա իր ուսին է դնում նրան՝ սրտի մոտ, ու տուն վերադարձնում: Այսպիսով ոչխարի վտանգված կյանքը նորոգում է: Մենք նույնպես հաճախ մոլորվում ենք: Աշխարհի եռուզեռի, կանաչ խոտերի հետևից գնալով՝ աստիճանաբար հեռանում ենք հոգևոր վիճակից, մոլորվում, մեր արժեքները, հավատամքը հետզհետե նվաղում է, բայց Տերը, հավատարիմ Հովիվ լինելով, փնտրում է ու գտնում մեզ, դնում ուսին, նորոգում մեր վտանգված կյանքը ու հոգին: «Իր անվան համար ինձ առաջնորդում է դեպի արդարության շավիղները»: Երբ հովիվները ոչխարներին տանում են բլուրների վրա, լավ գիտեն այդ ճամփաները, գիտեն՝ որն է վտանգավոր, որը՝ ապահով: Որքան ամոթանք կկրի հովիվը, եթե սխալ ճանապարհով առաջնորդի իր ոչխարներին: Ո՞վ կվստահի նրան հաջորդ անգամ: Հովիվները լավ են սերտում ճամփաները: Տերն էլ Իր անվան համար արդարության ճամփաներով առաջնորդում է մեզ որքան որ Իր անունը պատվավոր ու անարատ է, այնքան վստահելի և հաստատ են նրա խոստումներն ու ճամփաները: Դու հետևո՞ւմ ես Աստծո ճամփաներին: Հիսուսն ասել է. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը. ոչ մեկը Հորը չի գա, բացի Ինձանով»: Աստծո մոտ գալու միակ ճամփան Հիսուսն է: Եթե չես եկել, մոլորված ես, թող Տերը կանչի քեզ: Բարի լուրը այն է, որ Հիսուսը կանչում է:

Երբ հովիվը ոչխարներին բարձունքներ է հանում, վտանգավոր ճամփաներով անցնելու վախը կա: Երբ Տերը քայլում է մեր առջևից, թեև վախն ու տարակուսանքը մեզ պատեն ու մահվան շուքի ձորով անցնենք, չարից չենք վախենա: Երբ Տերը մեզ ուղարկում է այնպիսի առաքելությունների, որոնց ընթացքում նեղություններով և դժվարություններով ենք անցնում, մեր հավատքի փորձառությունն ընդլայնվում է, խորանում, ինչի արդյունում կարողանում ենք հասնել հավատքի բարձունքներին: Մենք էլ, որպես ոչխարներ, կարող ենք քաջաբար և հուսալի կերպով հետևել մեր առաջնորդ Հովվին: Արդյոք դու նայո՞ւմ ես Հիսուսին առօրյայիդ մեջ: Մեր միակ ջանքը Տիրոջը հաճեցնելը թող լինի: Չհուսահատվե՛նք, որովհետև Տերը մեզ հետ է: Աստծո Խոսքն ասում է, որ արդարի նեղությունները շատ են, բայց

Տերը բոլորից փրկում է, ազատում է նրան: Թող Նրա ցուպն ու գավազանը մեզ մխիթարեն:

Ցուպը գործածվում է վայրի գազաններ ջախջախելու համար: Այն ներկայացնում է հովվի զորությունը, իսկ գավազանը՝ հովվի իշխանությունը: Երբ մոլորվում էին, գավազանի կլոր ծայրն անցնում էր ոչխարի վզին, ու նա պարտադրանքով հետ էր բերվում: Բարի Հովիվն Իր ցուպով և գավազանով ջախջախում է մեր թշնամիներին: Նա Իր զորությամբ, իշխանությամբ, առաջնորդությամբ Իր մոտ է քաշում մեզ և ճիշտ ճանապարհի վրա կանգնեցնում: Աստծո զորության ներքո հավատացյալը կարող է հանգստանալ, վտանգից ապահով և պատսպարված զգալ: Առակացում գրված է. «Քո ամբողջ սրտով Տիրո՛ջը վստահիր ու մի՛ հենվիր քո հասկացողության վրա: Քո բոլոր ճամփաների մեջ ճանաչի՛ր Նրան, և Նա կուղղի քո շավիղները»: Երբ ոչխարն ընկնում է, կարողանում է միայն գոռալ: Նա չի մտածում փախչելու մասին, և հնար չունի ինքնիրեն մաքրելու: Մարդկության պարագան նույնն է. մենք մեր ջանքերով, բարի գործերով չենք կարող արդարանալ Աստծո առջև: Միակ ճանը բարի Հովվի շնորհքով մաքրվելն է և Աստծո առաջ սուրբ ներկայանալը:

Խղճամիտ հովիվը միշտ կավե բաժակը մինչև բերան լցնում է ջրհորից քաշած ջրով, որ ոչխարը կարողանա խմել: Նաև դաշտում ոչխարներին արածակելուց առաջ յուղ է դնում օձի բների մուտքի մոտ, որ օձը չկարողանա դուրս գալ և հոտին հետևել: Նա ոչխարների բերանն էլ ծածկում է յուղով, որ օձը չմոտենա նրանց: Այսպիսով, ապահովության մեջ է պահում ոչխարներին: Տերն էլ մեզ օծում է Իր Սուրբ Հոգով: Թեև վտանգավոր, նոր ու անծանոթ պարագաներում գտնվենք, Տերը հոգևոր փորձառության սեղան կպատրաստի, որտեղ մեր հոգևոր փորձառությունը կխորանա Իր առաջնորդության ներքո:

Ո՞րն է քեզ մտահոգող պարագան: Նոր եկեղեցի՞, քաղա՞ք, շրջապա՞տ, ընտանի՞ք: Մի՛ վախեցիր, քաջալերվի՛ր, որովհետև Հիսուսն Իր աշակերտների ու Իր բոլոր հետևորդների համար այսպես աղոթեց. Ես չեմ աղոթում, որ Դու նրանց աշխարհից դուրս վերցնես, այլ որ Դու նրանց չարից պահես»: Տերը մեզ չարից պահում է Իր հրեշ-

տակներով: Մեր երկնավոր Հայրը մեր բաժակը միշտ լի է պահում, առատությամբ է տալիս և ոչ թե խնայողությամբ: Կարո՞ղ ես պատկերացնել, թե Աստված ինչե՜ր կարող է տալ քեզ: Աստված քո մտածածից ավելին կարող է անել թե՛ ֆիզիկական, թե՛ նյութական, թե՛ հոգևոր, թե՛ մտային և թե՛ զգացական ոլորտում: Աստված առատորեն հոգում է Իր զավակների կարիքը:

Հոտի հետևից հսկիչ պահապան շներ են քայլում, որ գազանները չհարձակվեն: Ողորմությունը և բարերարությունն էլ հավատացյալների պահապաններն են: Աստված Իր բարությամբ ու ողորմությամբ է վարվում մեզ հետ, ոչ թե դառնությամբ կամ վրեժխնդրությամբ, այլ՝ սիրով: Անառակ որդին տուն դարձավ, որովհետև գիտակցեց իր հոր առատ սերը: Հիսուսն ասել է. «Ես ձեզ հետ եմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը»:

Դավիթը փափագեց Տիրոջ ներկայության մեջ ապրել իր բոլոր օրերում: Ես և դու ճանաչում ենք Տիրոջը, ու Նա ճանաչում է մեզ: Ուստի Տիրոջ առջև պիտի լինենք հավիտյան: Եթե այսօր աչքերդ փակես և աշխարհից հեռանաս, արդյոք վստա՞հ ես, որ Նրա ներկայության մեջ ես գտնվելու, արդյոք կարո՞ղ ես ասել. «Ո՛վ Տեր, Քո գրկի մեջ ա՛ռ ինձ»: Ե՞րբ ես վերջին անգամ զգացել Տիրոջ բարերարությունը, ողորմությունը՝ այդ հսկիչ, պահպանիչ ուժը քո կողքին: Ե՞րբ վերջին անգամ անդրադարձար այն փաստին, որ Տերը քո կյանքի կարիքներն առատությամբ հոգում է և քո բաժակը շատ լիքն է: Ե՞րբ վերջին անգամ Տերը պառկեցրեց ու հանդարտեցրեց քեզ և հոգաց քո կարիքը: Ե՞րբ Տերը Իր ուսի վրա՝ Իր սրտի մոտ դրեց քեզ ու տուն վերադարձրեց: Փափագս այն է, որ Տերը յուրաքանչյուրիս բաժինը լինի՝ որպես Բարի Հովիվ: Եվ երբ կյանքի անորոշությունների առջև գտնվենք, կարողանանք ասել. «Տերը իմ Բարի Հովիվն է, ես ոչ մի բանի կարոտություն չեմ ունենա»:

Վանիկ եղբ. Հադադյան

Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից

❊ ❊ ❊

Սաղմոս 5

5-րդ Սաղմոսը Տիրոջը վստահող անձի խորհրդածությունն է: Նա մտածում է Աստծո որոշ առաքինությունների մասին ու խնդրում Տիրոջ դատաստանը ամբարիշտների համար և Նրա պաշտպանությունը բոլոր նրանց համար, ովքեր վստահում են Նրան:

Դավիթն այս Սաղմոսը շարադրեց եբրայական բանաստեղծությանը բնորոշ ձևով: Սկզբնական միտքը կրկնվում է տարբեր բառերով՝ այն հաճախ զարգացնելով: Ուստի Դավիթը խնդրեց Տիրոջը, որ ականջ դնի իր խոսքերին և լսի իր աղաղակը: Նա ուզում էր, որ Տերը հաշվի առներ իր խնդրանքը երկու պատճառով: Առաջին՝ Տերն իր Թագավորն ու Աստվածն է: Ինքն աղոթում է Տիրոջը: Նա հայտարարում է, որ Աստված լսելու է իր ձայնը առավոտյան. ինքն իր խնդրանքները ներկայացնելու է Նրան նախքան օրը սկսելը: Դավթի խոսքերն ուղղված էին Տիրոջը, և նա ակնկալությամբ սպասելու էր Նրա պատասխանին:

Սա է այն մարդու կեցվածքը, ով ամբողջությամբ վստահում է Տիրոջը: Սա Աստծո հանդեպ մշտական վստահության վերաբերմունք է: Ամեն առավոտ Դավիթն աղոթքով բարձրացնում էր իր ձայնն առ Աստված՝ ակնկալելով, որ Նա կուղղորդի իր քայլերը:

Երկրորդ՝ 4-6-րդ համարներում Դավիթը նկարագրում է մեր Աստծո առաքինությունները: Նրա համար հաճելի չեն մարդկանց չար գործերը. Նրանում չարիք չի բնակվում: Իրականության մեջ չարիքը չի կարող ապրել Նրա ներկայության մեջ: Հետևաբար նրանք, որոնք ամբարտավան են ու պարծենում են իրենց մեղքերով, չեն կարողանալու կանգնել Նրա առջև: Թեև Աստված սիրում է բոլոր մարդկանց, Նա զզվում է նրանց արյունահեղություններից և խարդախ ճանապարհներից: Անօրենություն գործողները կարող են միայն ակնկալել Տիրոջ դատաստանը, որով տապալվելու են իրենց բոլոր ծրագրերը:

Դավիթը մտածում է Աստծո ողորմության կամ սիրառատ բարության մասին: Այս բառը երբեմն թարգմանված է որպէս հաստատակամ սեր և վերաբերում է փոխադարձ հարաբերությունից բխած վե-

բաբերմունքին: Թագավորի պարագայում այն դրսևորվում է իր հպատակներին պաշտպանելու դիրքորոշմամբ: Աստծո պարագայում այն դրսևորվում է Աստվածային սիրո դիրքորոշմամբ, որին մենք անարժան ենք: Դավիթը կարող էր մտնել Աստծո տուն՝ Աստծո սիրո ու բարության առատությամբ լցված՝ ակնածանքով խոնարհվելով Նրա առջև, խնդրելով Նրա առաջնորդությունը:

Աստծո սիրառատ բարության շնորհիվ Դավիթը կարող էր խնդրել Տիրոջը, որ իրեն Իր արդարությամբ առաջնորդի: Նա բազմաթիվ թշնամիներ ուներ, որոնք հարձակվելու էին իր վրա. նա պաշտպանության կարիք ուներ:

Դավիթն աղոթեց, որ Աստված իր թշնամիներին հանցավոր հանի և նրանց ծրագրերն իրենց սեփական իմաստության մեջ ձախողվեն: Տիրոջ դեմ նրանց ապստամբության պատճառով նա ուզում էր, որ նրանք Տիրոջ ներկայությունից դուրս նետվեն:

Դավիթը նկարագրեց անօրենություն գործողներին՝ մարդկանց, որոնց սրտերը կործանման ճանապարհի վրա են: Ոչ ոք չի կարող վստահել նրանց խոսքերին. Նրանց խոսքերում հավատարմություն չկա: Նրանք պատրաստ են բոլորին ոչնչացնել, քանի որ նրանց կոկորդները բաց գերեզմաններ են: Իրենց նպատակներին հասնելու համար, շողոքորթում են մարդկանց:

Վերջին երկու համարներում Դավիթը վերադառնում է իր աղոթքին՝ խնդրելով Տիրոջը, որ իրեն վստահողները Տիրոջ ցնծության մեջ բնակվեն: Եթե Աստված պաշտպանի նրանց, նրանք իսկապես ուրախությունից կարող են գոռալ: Քանի որ նրանք սիրում են Տիրոջ անունը, ուրեմն ուրախանալու են Նրանով: Արդարները կարող են մխիթարվել, քանի որ Աստված օրհնելու է նրանց և շրջապատելու է Իր բարեհաճությամբ:

Դոն Սթորմը

❊ ❊ ❊

Հազարամյա սուրբ քաղաքը, Կենաց գետը և փակման պատգամներ (1)

1. Ներածություն

Հավիտենականության տեսիլքից հետո Հովհաննես առաքյալին մոտենում է մեկ այլ հրեշտակ և նրան հրավիրում՝ տեսնելու հարսին՝ Գառան կնոջը: Հովհաննեսը, կարծես թե, դարձյալ վերադառնում է ժամանակի իրողության մեջ ու տեսնում սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը: Այնուհետև նա նկարագրում է իր տեսածի հսկայական չափերը և գերազանց շքեղությունը: Բառերը դժվար թե նկարագրեն այն:

Հովհաննեսը տեսավ սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը՝ երկրից վեր: Նա նայեց մի բանի, որը տեսանելի կլինի Երկնքում Հազարամյակի ժամանակ: Այս սուրբ քաղաքը կիջնի երկնքից իր հավիտենական տեսքով, բայց դեռևս պետք է մնա երկնքում այնքան ժամանակ, մինչև որ հին երկիրը փոխարինվի նորով: Այն կիջնի նոր երկիր, այնուհետև կասվի. «Աստծո խորանը մարդկանց մեջ» (Հայտ. 21:3):

Այնուհետև տրվեցին այս հազարամյա քաղաքի մանրամասները, և կարելի է նշել, որ թեև Եզեկիելի, Եսայու և մյուսների նկարագրած երկրային հազարամյա քաղաքը հոյակապ է, բայց Հովհաննեսի՝ տեսիլքում տեսածի միայն աղոտ պատկերն է:

Թեև արևը, լուսինն ու աստղերը կմնան իրենց տեղերում հազարամյակի ընթացքում (հմմտ. Ծննդ. 8:22, Երեմ. 31:35, 33:25), սակայն երկնային քաղաքի լույսը շատ ավելի պայծառ կլինի, քանի որ այս լույսը գալու է հենց Աստծուց: «Աստծո փառքն է լուսավորում նրան, ու նրա ճրագը Գառնուկն է» (Հայտ. 21:23):

Այնուհետև Հովհաննեսը տեսնում է Կենաց ջրի գետը և Կենաց ծառը: Եդեմի պարտեզի Բարու և չարի գիտության ծառի մասին ոչ մի հիշատակում չկա, քանի որ այլևս անեծք չի լինելու (Հայտ. 22:3): Այնուամենայնիվ, դեռ կլինի անեծքի վկայությունը հազարամյա երկրի վրա (հմմտ. Հայտ. 22:2, Եսայի 65:20):

Երկնային քաղաքում Աստծո ժողովուրդը «տեսնելու են Նրա երեսը, ու Նրա անունը նրանց ճակատների վրա պիտի լինի... և նրանք պիտի թագավորեն հավիտյանս հավիտենից» (Հայտ. 22:4-5): Ի՜նչ հեռանկար է սպասում բոլոր նրանց, ովքեր ապավինում են Տեր Հիսուսին այսօր:

Եզրափակիչ համարները (Հայտ. 22:6-21) հղում են անում Աստվածաշնչի ուսուցման բազմաթիվ թեմաների, և այդ թեմաները հերթափոխով տրվում են հրեշտակի, Տեր Հիսուսի և Սուրբ Հոգով նեշնչված Հովհաննեսի կողմից: Երեք անգամ Տեր Հիսուսն ասում է. «Ահա Ես շուտով կգամ» (հմր 7, 12 և 20) և Իրեն է վերագրում մի քանի աստվածային կոչումներ: Նկարագրվում է հավատացյալների և անհավատների ճակատագիրը, և ծարավին տրվում է վերջին կոչը. «Նա, ով ծարավ է, թող գա. և նա, ով ուզում է կենաց ջուրը, թող ձրի վերցնի» (հմր 17):

2. Հարսը՝ Գառնուկի կինը (21:9)

Նեղության ժամանակաշրջանի ավարտից հետո մեծ ուրախություն է տիրում Երկնքում Գառան հարսանիքի պատճառով, որին հաջորդում է հարսանեկան ընթրիքը (Հայտ. 19:7-9): Դա տեսնելուց հետո մեկ այլ հրեշտակ հրավիրեց Հովհաննեսին՝ տեսնելու Գառան հարսնացուին: Այս հրեշտակը Հոգով նրան տարավ մի մեծ և բարձր լեռ և ցույց տվեց սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը, որն իջնում էր Երկնքից՝ Աստծո կողմից: Այս սուրբ քաղաքը մոլորված աշխարհին ցույց էր տալիս Գառան նորապսակ կնոջ փառքը, երբ նա դուրս էր գալիս երկրնքից:

Փեսայի ընկերներն ընդգրկվելու են սուրբ քաղաքում: Մենք ակնկալում ենք, որ բոլոր երկնային սրբերը կլինեն այնտեղ (այսինքն՝ բոլոր հավատացյալները, ովքեր մահացել են Պենտեկոստեի օրվանից առաջ): Եբրայեցիներին ուղղված նամակը սովորեցնում է մեզ, որ Աբրահամը «սպասում էր այն քաղաքին, որ հիմքեր ունի, որի ճարտարապետն ու արարիչն Աստված է» (Եբր. 11:10): Այսպիսով, մենք եզրակացնում ենք, որ երկնային սրբերը լինելու են սուրբ քաղաքում, և սուրբ քաղաքը ցուցադրելու է Գառան կնոջը իր հազարամյա փառքով:

3. Սուրբ քաղաք Երուսաղեմը (21:10-14)

Նախկինում Հովհաննեսը Հոգով տարվել էր մի անապատ՝ տեսնելու մեծ քաղաքը (Հայտ. 17:3, 18), բայց այժմ նա Հոգով տարվեց մի մեծ և բարձր լեռ և տեսավ սուրբ քաղաքը՝ Երուսաղեմը, որն իջնում էր երկնքից՝ Աստծո կողմից (Հայտ. 21:10): Ինչպիսի՜ հակադրություն: Հետևյալ աղյուսակը ավելի մանրամասն ցույց կտա այս հակադրությունը:

Մեծ քաղաք	Սուրբ քաղաք
Մեծ պոռնիկ՝ կեղծ եկեղեցին՝ մանուշակագույն և կարմիր հագուստ հագած, հաճելի է աշխարհին:	Գառան կինը՝ ճշմարիտ եկեղեցին՝ նուրբ սպիտակ հագուստ հագած, պայծառ ու մաքուր, հաճելի է Քրիստոսին:
Խորհրդանշվում է Բաբելոնը (շփոթություն):	Խորհրդանշում է Երուսաղեմը (խաղաղություն):
Տեսարանը՝ անապատից (ամայություն և մահվան վայր):	Տեսարանը՝ բարձր լեռից (աստվածային հայտնության վայր):
Բոլոր չարերի ու չարիքի բնակավայր:	Բոլոր արդարների և մաքուրների բնակավայր:
Վերջնական վիճակ՝ մահ և խավար:	Հավիտենական վիճակ՝ Աստծո կյանք ու լույս:

Անդրադառնալով եկեղեցուն՝ Պողոս առաքյալը խոսում է մի ժամանակի մասին, երբ Քրիստոսը ներկայացնելու է նրան «... որպես փառավոր եկեղեցի՝ առանց արատի, խորշոմի, կամ այլ թերության» (Եփես. 5:27): Սա տեղի կունենա «Գառան հարսանիքին»: Այնուհետև եկեղեցին կհայտնվի աշխարհին Հազարամյակի ժամանակ: Այդ օրը եկեղեցին ոչ միայն լույս կարտացոլի, այլև կփայլի Աստծո փառքով: Հովհաննեսն այսպես է նկարագրում տեսիլքը. «Նա ուներ Աստծո փառքը, և նրա լուսավորությունը խիստ թանկարժեք քարի նման էր, հասպիս քարի նման, բյուրեղապակու պես թափանցիկ» (Հայտ. 21:11): Հավանական է, որ այստեղ հիշատակված հասպիսը տարբերվում է նրանից, ինչ մենք այսօր անվանում ենք հասպիս, այսինքն՝ շատ գույների և երանգների անմաքուր բազմազանություն

(հիմնականում կարմիր, դեղին և շագանակագույն) անթափանց, բարակ բեկորներով: Սուրբ քաղաքի հասպիսը մաքուր է, ինչպես բյուրեղը:

Այնուհետև Հովհաննեսը նկարագրում է քաղաքի մեծ, բարձր պարիսպը և դրա հիմքերը: 12 դարպաս կար, ու դարպասների վրա 12 հրեշտակ: Դարպասների վրա անուններ էին գրված, այսինքն՝ Իսրայելի 12 ցեղերի անունները: 12 հիմք կար, որտեղ գրված էին Գառան 12 առաքյալների անունները: Շատ կարևոր է Տեր Հիսուսի ասածը. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ դուք՝ Ինձ հետևողներդ, վերականգման ժամանակ, երբ Մարդու Որդին նստի Իր փառաց աթոռին, դուք էլ պիտի նստեք տասներկու աթոռների վրա՝ Իսրայելի տասներկու ցեղերին դատելու համար» (Մատթ. 19:28):

Ի տարբերություն ցանկացած երկրային քաղաքի, սուրբ քաղաքը հավերժ անհասանելի է լինելու բոլոր չար ուժերի համար: Այս փաստը խորհրդանշում են պարիսպը, դարպասները և ներկա հրեշտակները: Հազարամյակում Աստծո ոխերիմ թշնամին կապվելու է և փակվելու է Անդունդում, իսկ ազատ արձակվելուց հետո նրան նետելու են կրակի լիճը:

4. Քաղաքի չափերը (21:15-17)

Եզեկիելի՝ երկրային հազարամյա տաճարի տեսիլքում (Եզեկ. 40-48 գլուխներ) պարիսպն ուներ 3,2 մետր լայնություն և 3,2 մետր բարձրություն, իսկ դարպասներից դուրս գտնվող յուրաքանչյուր կողմը 267 մետր էր: Կան նաև այլ չափագրություններ, սակայն կարող ենք վստահ ասել, որ այս տաճարը սովորական չափեր ուներ: Այնուամենայնիվ, սուրբ քաղաքը համեմատաբար մեծ է, և ավելին, նրա բարձրությունը նույնն է, ինչ երկարությունը կամ լայնությունը: Այս չափը տրված է որպես 2400 կիլոմետր, որն ինքնին կարող է խորհրդանշական լինել և ոչ թե իրական: Բայց եթե այն ընդունենք որպես իրական չափ՝ կարող ենք ասել, որ բազային տարածքը 5,760,000 քառ/կմ է, որը կազմում է Ավստրալիայի տարածքի 75 տոկոսը: Սուրբ քաղաքի բարձրությունը 2400 կիլոմետր է կամ Էվերեստի բարձրությունից 270 անգամ ավել: Սա մեզ որոշակի պատկերացում է տալիս սուրբ քաղաքի հսկայական չափերի մասին:

Անցյա՞լ, թե՞ ապագա

«Ցանկանալով ցանկացա այս զատիկը ձեզ հետ ուտել Իմ չարչարվելուց առաջ: Բայց ասում եմ ձեզ, թե այլևս չեմ ուտելու սրանից, մինչև որ այն կատարվի Աստծո թագավորության մեջ» (Ղուկ. 22:15-16):

Որքա՜ն տարօրինակ էր սա հնչել տասներկուսի ականջին, երբ նստած էին Տեր Հիսուսի հետ Զատկի ընթրիքին: Նրանք գիտեին, որ Զատիկը շատ տարիներ առաջ հրեա ժողովրդի Եգիպտոսի լծից և ստրկությունից հրաշալի կերպով ազատվելու հիշատակումն էր: Մովսեսը պատվիրել էր երբեք չմոռանալ այդ հզոր ազատագրումը: Ամեն տարի Զատկի ընթրիքն այն ժամանակն էր, երբ ծերերն ու երիտասարդները միասին հիշում էին, թե ինչպես Աստված իրենց դուրս բերեց Եգիպտոսից, որպեսզի տանի Ավետյաց երկիր, որը խոստացել էր տալ Աբրահամին և նրա սերնդին:

Սակայն Տեր Հիսուսն այստեղ Զատիկը ներկայացնում է որպես թե ապագայում կատարվելիք իրադարձություն և ոչ թե անցյալում կատարված դեպք: Նրանք հավանաբար մտածում էին. «Ինչպե՞ս կատարել այս Զատիկը: Ի՞նչ է սա նշանակում: Արդյո՞ք ևս մեկ ազատագրում է լինելու ապագայում»:

Նրանք դեռևս չէին կարողանում հասկանալ, որ Տեր Հիսուսի մահը շատ ավելի հրաշալի, ավելի տևական և շատ ավելի փառավոր գործողություն է կատարելու, քան այն, ինչ նրանք հիշատակում էին Զատկի ժամանակ: Ավելի ուշ Պողոսը գրեց. «Քանզի Քրիստոսը՝ մեր Զատիկը մեզ համար զոհվեց» (Ա Կորնթ. 5:7), և շուտով նրանք տեսնելու էին Հիսուսի մահը, որը ժողովրդին ազատելու էր մեղքից ու աշխարհից ու տաներ դեպի Աստված: Այս մեծ ու հավիտենական ազատագրումը կատարվեց Զատկին:

Զատկի ընթրիքին, որը հաճախ կոչում ենք Տիրոջ Սեղան, Տեր Հիսուսը բաշխեց հացն ու գինին: Երբ հիշելու լինենք Նրան, կհիշենք Նրան, ով մահացավ՝ մեզ աշխարհից ազատագրելու, մեզ հոգով «բարի երկիր» բերելու և Իր հետ հաղորդակցության մեջ դնելու հա-

մար: Կհիշենք, որ Նա մահացավ մեր մեղքերի համար: Առանց Քրիստոսի զոհաբերության, փրկությունը չէր կատարվի, բայց իրականության մեջ Զատկի զոհը մեղքի պատարագ չէր: Այն եզակի զոհաբերություն էր, որը բաժնեց Իսրայելին Եգիպտոսից և հնարավոր դարձրեց նրանց վերադարձը այն երկիր, որտեղ Աստված խոստացել էր բնակվել նրանց մեջ:

Երբ Նրա սեղանի շուրջը մեկ հաց կիսենք, կհիշենք, որ Տեր Հիսուսը մահացավ մեզ համար, որպեսզի հաղորդ լինենք Իր կյանքին (Հովհ. 12:24): Երբ բաժակից խմենք, կհիշենք Նրան, ում արյունը կնքեց հավիտենական ուխտ՝ խոստանալով միշտ լինել մեզ հետ և մի օր հավաքել մեզ Իր մոտ հավիտյանս հավիտենից:

Զատկի ժամանակ հրեաները հիշում էին Եգիպտոսից ելքը: Տիրոջ սեղանի շուրջը մենք հիշում ենք աշխարհից մեր ելքը, որն իրականացավ մեր Տեր Հիսուսի մահվամբ ու հարությամբ:

Նեյլ Բուքման

❊ ❊ ❊

Հոբ (2)

Անցյալ հոդվածում խորհրդածեցինք Հոբի ուղղամտության և սատանայի հարձակումների մասին:

Հոբի մխիթարիչները

Հոբի ընկերներից ոմանք լսեցին նրան պատահած չարիքի մասին և ճանապարհ ընկան՝ նրան մխիթարելու համար: Թերևս ոմանք մտածեն, թե սատանան հատուկ ընտրեց Հոբի մխիթարողներին, որպեսզի նրա կյանքը ավելի դժբախտացնի: Նման միտքը ենթադրություն է, բայց գուցե և հավանական: Մենք գիտենք, որ սատանան ձեռք չտվեց Հոբի կնոջը: Արդյո՞ք նա հաշվի առավ, որ կինը չուներ Հոբի հավատքի ուժը, և հետևաբար, կարող էր նրան օգտագործել,

որ դրդի Հոբին անիծել Աստծուն: Մենք չգիտենք, սակայն կարող ենք վստահ լինել, որ սատանան կանի այն ամենը, ինչ կարող է իրեն տրված սահմաններում, և կօգտագործի ամեն հնարավորություն մեր խնդիրները մեծացնելու և, եթե հնարավոր է, մեզ մեղքի մեջ գցելու համար:

Լսելով Հոբի ծանր պատուհասի մասին՝ նրա ընկերները, հավանաբար, բարի մտադրությամբ ձեռնամուխ եղան նրան մխիթարելու: Բայց նրանք այնքա՜ն անօգնական և անկարեկից էին, որ մխիթարողի անուն ձեռք բերելու փոխարեն հուսահատեցնողի անուն ձեռք բերեցին, որ մինչև օրս նման մարդկանց այդպես ենք անվանում՝ ասելով՝ Հոբի ընկերների պես ես խոսում: Բայց ինչո՞ւ էին նրանք այդքան անօգնական:

Հոբի գրքում կարդում ենք նրանց համոզմունքների և Հոբի հասցեին հնչեցրած մեղադրանքների մասին, որոնք երեք փուլով ներկայացվում են մեզ: Յուրաքանչյուր ելույթում Հոբի հասցեին հնչած մեղադրանքներն ավելի լուրջ ու սաստիկ էին: Մխիթարողներից յուրաքանչյուրը լիովին համոզված էր, որ Հոբն այնքան լուրջ մեղք էր գործել, որ Աստված նրան դատապարտել էր: Եղիփազը, ով առաջինը խոսեց, սկզբից զգուշությամբ շարադրեց իր աստվածաբանությունը, բայց այն համոզվածությամբ, որ եթե ինչ-որ մեկը Հոբի պես տառապում է, ուրեմն հաստատ վատ բան է արել: Նա կարծում էր, որ անմեղ մարդիկ տառապանքի չեն հանդիպում:

Բաղդատն իր փաստարկներն ավելի առաջ տարավ: Նա պնդեց, որ Հոբի զավակները մեղք են գործել, և Աստված նրանց պատժել է իրենց մեղքերի համար: Քանի որ Աստված չի մերժում անարատ մարդուն, Հոբը պետք է մաքրվի և Աստծո առջև ուղիղ լինի, որպեսզի Աստված ընդունի նրան: Սոփարն ավելի անբարյացկամ էր: Նա մտածում էր, թե Հոբը պետք է ավելի շատ տառապի՝ պնդելով, որ Աստված նույնիսկ մոռացել է Հոբի գործած որոշ մեղքերը:

Ելույթների երկրորդ փուլում երեք այցելուներն ավելի ծայրահեղ դարձան: Եղիփազը ոչ միայն ենթադրեց, որ Հոբը նման կերպով պատժվելու համար հավանաբար լուրջ մեղք է գործել, այլև նկարագրեց այն մարդու ճակատագիրը, ով իր բռունցքը թափահարում է

Ամենակարողի դեմ: Նման մարդը պիտի կորցնի իր ամբողջ հարստությունը և ավերակներում բնակվի: Բաղդատը պատկերավոր նկարագրեց անաստվածի ճակատագիրը՝ համոզված լինելով, որ ամբարիշտների ճրագը հանգչելու է ու սերունդ չեն ունենալու, նրանց անունը աշխարհից անհետանալու է ու այլևս չհիշվի: Սոփարը կրկնեց իր համոզմունքն առ այն, որ ամբարիշտներին աղետալի ճակատագիր է սպասում:

Ելույթների երրորդ փուլին մասնակցեցին միայն Եղիփազն ու Բաղդատը: Նրանք Հոբին մեղադրեցին այնպիսի բաներում, որոնք նա երբեք չէր արել: Նրան մեղադրում էին մարդկանց հարստահարելու, այրիներին դատարկաձեռն ճանապարհելու և այլ բաներու մեջ: Աստված սատանային արդեն ասել էր, որ Հոբի պես կատարյալ մեկը չկա ամբողջ աշխարհում, նա արդար, աստվածավախ և չարությունից խուսափող մարդ է:

Հոբի ընկերներից յուրաքանչյուրը սրտի խորքում ուներ այն համոզմունքը, որ Աստծո առաջ հաճելի դառնալու համար մարդը պետք է վարքի որոշակի չափանիշի հասնի: Հավանաբար արդարացի կլինի ասել, որ Հոբի ընկերներն այս կյանքից այն կողմ չէին մտածում: Նրանք մտածում էին, որ մարդն իր կատարած բարի գործերով կարող է արդարանալ: Սակայն մեկ այլ լուրջ մոլորություն էլ ունեին: Նրանք Հոբին խորհուրդ տվեցին անարատ կյանքով ապրել, որպեսզի Աստված օրհնի իրեն: Բայց սա ճիշտ այն մեղադրանքն էր, որ սատանան նկարագրեց՝ ասելով, թե Հոբն Աստծուն է ծառայում այն օրհնությունների համար, որոնցով Աստված օրհնել է նրան: Միշտ չէ, որ Աստծո ծառաները բարեկեցիկ կյանք են ունենում, քանի որ Աստծուն են ծառայում: Եթե այդպես լիներ, ապա շատ մարդիկ սխալ պատճառով կսկսեին ծառայել Աստծուն:

Եղիուս

Հոբի մխիթարողները չկարողացան համոզել նրան, որ այս ամենն իր մեղքի պատճառով է, և վերջապես դադարեցին ապացուցել իրենց տեսանկյունը: Հենց այս փուլում ներս մտավ Եղիուսը: Երիտասարդական հանդգնությամբ լի երիտասարդը պնդում էր, թե գիտի խնդիրը: Այնուամենայնիվ, նրա որոշ ենթադրությունները սխալ էին, հե-

տևաբար մյուս ընկերների պես անհեթեթություն էր խոսում: Նա հայտնեց այն միտքը, որ Աստված ցավով է պատժում մարդուն: Բայց մենք գիտենք, որ Հոբը չէր պատժվել իր գործած սխալների համար:

Եղիուսն ուշադրություն հրավիրեց այն փաստի վրա, որ Հոբը հանդիպած դժվարությունների համար մեղադրում էր Աստծուն: Հոբը խոսում էր Աստծո ճանապարհների մասին, երբ իրականության մեջ չգիտեր, թե Աստված ինչ էր անում: Սակայն Եղիուսը մյուսներից ավելի բան չգիտեր: Նա ոչինչ չգիտեր Աստծո և սատանայի միջև եղած մրցակցության և այն ծայրահեղ ճնշման մասին, որին բախվել էր Հոբը:

Բացի այն, որ Եղիուսը ծանոթ չէր բոլոր փաստերին, նա նույնքան մեղավոր էր, որքան մյուսները՝ մեղադրելով Հոբին այնպիսի խոսքերում, որոնք նա չէր ասել: Հոբը երբեք չասաց, որ ինքը մաքուր է ու առանց հանցանքի: Ամբողջ ընթացքում նա միայն պնդում էր, որ ինքը մեղք չի գործել, որով նման ծանր պատիժ է հրավիրել իր գլխին:

Եղիուսի և Հոբի մխիթարողների միջև տարբերություններ կային: Նա մյուսների պես չասաց, որ եթե Հոբը ապաշխարի, ապա Աստված հարստությամբ կօրհնի նրան: Եղիուսն Աստծո զորության մասին խոսեց. «Ահա Աստված բարձրացած է Իր զորությամբ. ո՞վ կարող է Նրա պես սովորեցնել» (Հոբ 36:22):

Արդյո՞ք կարող ենք պատկերացնել Հոբի փորձառած դժվարությունները: Քիչ են այն մարդիկ, որոնք երբևէ բախվել են սատանայի հակառակությանը, ինչպես Հոբը: Նման պահերին Աստծո հանդեպ մեր վստահությունը ծանր քննության է ենթարկվում: Ի՞նչ կարող ենք անել: Մենք պետք է Աստծուն նայենք, Նրա աջակցող շնորհը խնդրենք և հանգստանանք այն վստահության մեջ, որ մենք ոչ մի այլ փորձության չենք ենթարկվել, բացի դրանից, ինչ հատուկ է մարդուն. բայց Աստված հավատարիմ է և չի թողնի ձեզ, որ ձեր կարողությունից ավել փորձվեք, այլ փորձության հետ կտա նաև ազատվելու միջոց, որ կարողանաք այն կրել (Ա Կորնթ. 10:13):

Դոն Սթորմը

(Շարունակելի)

Բարձրյալի ծածկոցի տակ

Սողոմոն իմաստունը շատ իմաստալից խոսք ունի Ժողովողի գրքում: «Ամեն բան իր ժամանակն ունի», - ասում է նա ու թվարկում կյանքի մի քանի փուլեր, ինչպիսիք են՝ ծնվելու ժամանակը և մեռնելու ժամանակը, լացելու ժամանակը և ծիծաղելու ժամանակը, փնտրելու ժամանակը և կորցնելու ժամանակը, լռելու ժամանակը և խոսելու ժամանակը, սիրելու ժամանակը և ատելու ժամանակը՝ վերջում ավելացնելով պատերազմի ժամանակը ու խաղաղության ժամանակը: Կարծես սա էլ, մյուսների պես, ակնկալվող երևույթ է կյանքի ընթացքում:

«Պատերազմ» բառն անգամ վախազդու է և սարսափազդու, սակայն ճշմարիտ է, որ աշխարհի սկզբից ազգերն իրար դեմ են դուրս եղել, թագավորները՝ թագավորների դեմ ու բռնակալները, այլ երկրներ ոտնահարելով, իրենց սահմանները ընդլայնել են:

Հակոբոս առաքյալը, այս թեման շոշափելով, հարց է տալիս, թե «որտեղի՞ց են պատերազմները, և որտեղի՞ց են կռիվները...» (Հակ. 4:1-6): Նա նշում է ցանկության, նախանձի, աշխարհասիրության և ամբարտավանության չար հոգին, որ սատանայի դրդմամբ աշխարհն իրար է խառնում: Այսուամենայնիվ պատերազմը բնական երևույթ ենք համարում: Աստվածաշնչում հաճախ կարդում ենք իսրայելացիների մղած պատերազմների մասին: Նրանց թշնամիների հարձակումների մասին արձանագրությունները բազմաթիվ են:

Դարերի ընթացքում պատահած բյուրավոր պատերազմներ մրոտել են պատմության անհամար էջերը: Դժբախտաբար պայքարի ընթացքում միլիոնավորներ են մահացել: Մայրերն անմխիթար ողբացել են իրենց սրտի հատորների կորուստը, կանայք այրիացել են ու զավակները՝ որբացել, քաղաքները քարուքանդ են եղել ու երկրներ են կործանվել: Ահռելի և քստմնելի տեսարանները տխրեցնում են ու սարսափեցնում բոլորիս: Երիտասարդ զինվորներ, ինչպես նաև անմեղ քաղաքացիներ ամեն օր մահանում են: Որտեղ պատերազմ կա, այնտեղ տառապանք, ցավ, վիշտ ու սուգ կա՝ ատելությամբ և զայ-

րույթով լի: Տեր Հիսուսը համբարձումից առաջ Իր աշակերտներին զգուշացրեց. «Եվ դուք լսելու եք պատերազմներ և պատերազմների լուրեր. զգո՛ւյշ եղեք, որ չտագնապեք, որովհետև այս բոլոր բաները պիտի լինեն, բայց դեռ վերջը չէ: Բայց այս բոլորը՝ ցավերի սկիզբն է» (Մատթ. 24:6, 8):

Ուստի որպես հայ քրիստոնյա հավատացյալներ՝ պետք է արթուն և զգաստ լինենք: Մենք չենք կարող պատերազմի գնացքը կանգնեցնել: Մեր բաժինն է՝ աղոթել և խնդրել Աստծուն, որ իմաստություն տա մեր քաղաքագետներին ու մեզ չարից պաշտպանի:

Պողոս առաքյալը հորդորում է մեզ. «Թող ամե՛ն մարդ բարձր իշխանություններին հնազանդ լինի...» (Հռոմ. 13:1) և երիտասարդ Տիմոթեոսին ասում է. «Ուստի աղաչում եմ, ամեն բանից առաջ աղերսանք, աղոթք, բարեխոսություն և գոհություն մատուցել բոլոր մարդկանց համար, հատկապես՝ թագավորների և բոլոր նրանց, որ իշխանության մեջ են, որպեսզի խաղաղ ու հանդարտ կյանք վարենք, աստվածապաշտությամբ և անկեղծությամբ» (Ա Տիմ. 2:1-2): Սա է մեր բաժինը և փափագը, ոչ թե քննադատելը կամ այպանելը: Մեր պարտականությունը զինվորներին Տիրոջ պաշտպանությանը հանձնելն ու մեր կառավարության համար աղոթելն է:

Քորթնի անունով մի երիտասարդ կին պատմում է, որ Իրաքի պատերազմում, որպես զինվոր, փորձառաբար վայելել է Ամենակարողի պաշտպանությունը:

2001 թվականի փետրվարին այս երիտասարդուհին գեղատեսիլ լեռներով շրջապատված Կոլորադո նահանգից զորակոչվեց ամերիկյան բանակ, քանի որ սրտում կոչում զգաց այդպես անելու: Լավ մարզիկ լինելով՝ նախնական քննությունները հաջողությամբ ավարտեց և ճարտարագիտական ուսում ստացավ: Երկու տարի անց՝ հուլիսի մեկին, Քորթնին գտավ աշխարհի այն անկյունը, որի մասին բոլորովին անտեղյակ էր: Իրաքի եղանակը տաք էր և անապատային: Նա շուտով ընտելացավ շրջապատին և իր ջոկատով սկսեց հաճախ ճամբորդել՝ քննարկելու և տեղեկություն հավաքելու շրջանների մասին, որտեղ կարելի էր զորանոցներ կառուցել: Այսպիսի ճամբորդությունների ընթացքում այս մանկամարդ զինվորը սկսեց մտեր-

մանալ Աստծո հետ ու խոսել Նրա հետ: Մինչ վայրագությունները սաստկանում էին, ուրիշ զինվորական ջոկատներից լուրեր էին հասնում այն մասին, որ իրենց դեմ հակառակությունը շատանում է: Մինչ Քորթնին և իր ջոկատը քաղաքից քաղաք էր ճամփորդում, նա իր Նոր Կտակարանը գրպանում էր պահում և ապահովության աղոթքը շարունակ իր շուրթերի վրա էր:

Այս ջոկատը տեղեկություն քաղելու առաքելությամբ ուղարկվեց Բաղդադի հյուսիս՝ Սամարրա: Մինչ հեռանում էին քաղաքից, իրենց առջևից գնացող հրասայլը նշան տվեց, որ շուտափույթ վերադառնան: Մինչ վերադառնում էին Սամարրա, հրաձգության բախվեցին, և բոլոր զինվորները բեռնատարներից դուրս ցատկեցին ու պատսպարվեցին: Քորթնին ավտոմեքենայի ետևը թաքնվեց ու տեսավ, որ իրաքցի զինյալներն արագընթաց սուրացող ավտոմեքենայից կրակում են իրենց ճանապարհին գտնվող ամերիկացի զինվորներին: Պատասխան կրակ արձակվեց, և իրաքցիների ավտոմեքենան, ուղղությունը կորցնելով, ընթացավ Քորթնիի ուղղությամբ: Այս մանկամարդ զինվորը պետք է շատ շտապ որոշում կայացներ: Մինչ սրտում աղոթում էր, վազեց դեպի բեռնատարի առջևի մասը և նույն վայրկյանին իրաքցու ավտոմեքենան, որի մոտ սկզբում թաքնվել էր, ուժգին հարված ստացավ:

Ամերիկյան ջոկատը հրաման ստացավ վիրավոր իրաքցի վարորդին բեռնատարով փոխադրել հիվանդանոց: Քորթնին հեռվից լսում էր մզկիթից բարձրախոսով սփռվող մահմեդական աղոթքի կանչը, իսկ ավտոմեքենայի հետևից վիրավոր իրաքցու հեծեծանքն արձագանքում էր իր հոգնած գլխում: Վերջապես ապահով հասան ամերիկյան զորանոց: Քորթնին՝ կեղտոտ և արյունոտ, իջավ բեռնատարից ու դողդողալով՝ ծունկի եկավ՝ փառք տալու Աստծուն, որ իրեն պաշտպանեց ստոյգ մահից: «Այս պատահարից հետո հավատքս զգալիորեն ավելի խոր և ավելի անձնական բնույթ ստացավ, - ասաց նա: - Ես Աստծո պաշտպանող ձեռքը զգացի, երբ անվնաս վերադարձանք մեր զորանոց»:

Դրանից հետո անդադար աղոթելը շնչելու պես բնական սովորություն դարձավ Քորթնիի համար, մինչ շարունակում էր ծառայել Իրաքում:

Վերջապես, 2004 թվականի ապրիլին նա իր ջոկատի հետ վերադարձավ հարազատ քաղաք՝ Կոլորադո Սփրինգս: Երբ ամերիկյան քայլերգը հնչեց՝ որպես բարի գալուստ, Քորթնիի աչքերից հոսեցին կուտակված արցունքները, որ ամիսներ ի վեր այրում էին իրեն: Նա մտածեց իր հայրենիքի հանդեպ ունեցած սիրո, Իրաքում ծառայող զինվորների և պատերազմում զոհված մարտիկների մասին, հուզմունքով նայեց իր ընտանիքին, որ եկել էր՝ իրեն դիմավորելու:

Այժմ այս օրիորդը փորձում է ընտելանալ բնականոն կյանքին՝ ուսումը շարունակելով և ապագայի մասին մտածելով: «Հեշտ չէ առաջ գնալ, երբ գիտես, որ դեռ կա պատերազմի դաշտ վերադառնալու, զինվորական պարտականության շրջանն ավարտելու հնարավորությունը: Իրաքում տեսածներս և լսածներս միշտ մտքիս մեջ են: Բազմաթիվ մարզերում աճեցի այս փորձառությունով: Այլևս նույն անձը չեմ ո՛չ հոգևորապես և ո՛չ զգացական ոլորտում: Մինչ օրս մղձավանջներ եմ ունենում քնած ժամանակ: Բայց ամեն անգամ, երբ տեսնում եմ կամ լսում եմ պատահարներ Իրաքի մասին, հիշում եմ, թե Աստված ինչպես հավատարմորեն պահպանեց ինձ Իր թևերի տակ: Գիտեմ, որ ինչ էլ պատահի ապագայում, ես երբեք մենակ չեմ»:

«Բարձրյալի գաղտնի տեղում ապրողը Ամենակարողի ստվերի տակ է հանգչելու: Տիրոջ մասին ասելու եմ. «Իմ ապավենն ու ամրոցն է, իմ Աստվածը, ում վրա է հույս»» (Սաղ. 91:1-2): Ամեն:

Քաղված՝ «Բարեպտուղ ձիթենին» գրքից

❊ ❊ ❊

«Ով Իմ պատվիրաններն ունի և պահում է դրանք, նա՛ է Ինձ սիրողը. և նա, ով սիրում է Ինձ, պիտի սիրվի Իմ Հոր կողմից, և Ես պիտի սիրեմ նրան և Ինձ պիտի հայտնեմ նրան: Եթե մեկն Ինձ սիրի, Իմ խոսքերը պիտի պահի. և Իմ Հայրը պիտի սիրի նրան, և մենք նրան պիտի գանք և պիտի բնակենք նրա հետ»:

Հովհ. 5:21, 23

Համագործակցության առաքինությունը

Հեռուստատեսությամբ մի խոսնակ պատմեց, որ երկու կանայք նույն ծերանոցի վերականգնողական կենտրոնում էին բնակվում: Յուրաքանչյուրը կաթված էր ստացել և ուներ սահմանափակ կարողություններ: Հռութի աջ կողմն ամբողջությամբ վնասված էր, իսկ Մարգարիտի ձախ կողմն անշարժ էր:

Հռութն ու Մարգարիտը անցյալում կատարելագործված դաշնակահարուհիներ էին, սակայն ներկայում ընդունել էին այդ իրողությունը, որ այլևս չեն կարողանալու նվագել:

Մի օր ծերանոցի պատասխանատուն խնդրեց այս երկու կանանց, որ փորձեն կենտրոնի դաշնամուրը միասին նվագել. Հռութը ձախ ձեռքի բաժինը կատարի, Մարգարիտը՝ աջինը:

Նրանք այդպես արեցին և երաժշտությունը շատ գեղեցիկ հնչեց: Բարեկամություն մշակվեց և երկու կանանց կյանքը վերանորոգվեց և իմաստավորվեց ուրախությամբ ու գոհունակությամբ:

Որպես հավատացյալ, մենք նույնպես կանչված ենք՝ ուրիշ հավատացյալների հետ գործելու: Ամեն մարդ իր տաղանդները պետք է օգտագործի ուրիշի հետ, և հետևաբար մյուսի պարգևներն ընդունի՝ իր տկար մասերը լրացնելու համար:

Այսպես Քրիստոսի մարմինը կզորանա և շատ ազդեցիկ կդառնա, նաև կհայթայթվեն յուրաքանչյուր անձի անհատական կարիքները: Այն, ինչ հավատացյալը չի կարող անել միայնակ, թերևս երկու կամ ավելի հավատացյալներ կարող են միասին անել:

Երբ կույրը օգնում է կաղ բարեկամին, երկուսն էլ առաջ են գնում: Համագործակցությունը բարեբեր և օրհնաբեր առաքինություն է: Այն մշակելով՝ փառավորում ենք Աստծուն ու քաջալերում իրար (Հռոմ. 12:4-5):

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

«Խաղաղություն եմ թողնում ձեզ, Իմ խաղաղությունն եմ տալիս ձեզ...»

(Հովհ. 14:27)

Հարցե՞ր, անպատասխան բազո՞ւմ հարցեր...

2023 թվականի ավարտին փակեցինք հայ ժողովրդի պատմության՝ կյանքի ու մահվան պայքարի, կռվի ու կորուստների ամենածանր էջը: 2022 թվականի դեկտեմբերին ադրբեջանական «էկոակտիվիստ» կոչված հանցագործները փակեցին Արցախը մայր Հայաստանին կապող միակ ճանապարհը: Ամիսներ շարունակ արցախաբնակ մեր հայրենակիցները պայքարեցին, որ բացվի Բերձորի (Լաչինի) միջանցքը: Դա հացի խնդիր չէր: Այդ պայքարն ինքնորոշման իրավունքի, արցախցու՝ իր վաղնջական հայրենիքում ապրելու և Արցախի հողը հայկական պահելու պայքար էր: Մեծերն ու երեխաները տևական ժամանակ ապրեցին հումանիտար աղետի պայմաններում: Ցավոք, ավելի քան ինը ամիս շրջափակված Արցախի կյանքի ճանապարհը բացվեց էթնիկ զտման ու գաղթի համար: Սկսվեց հերթական պատերազմը: Շատ ծանր և դաժան օրեր ապրեց Արցախի ժողովուրդը: 2020 թվականին Հայաստանում ապաստանած ավելի քան 20,000 արցախցիների կյանքի ուղին կիսեցին բռնի տեղահանված 120,000 մեր հայրենակիցները: Նրանցից շատերը դարձան կրկնակի կամ եռակի փախստական:

Հակառակորդի սանձազերծած հերթական արհավիրքը, դրան հաջորդած բենզինի պահեստի պայթյունը մեզնից խլեցին հարյուրավոր կյանքեր, գերեվարվեցին տարբեր ժամանակների Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության գործող և նախկին ներկայացուցիչներ:

Ցավակցություն ու զորակցություն ենք հայտնում բոլոր նահատակների ընտանիքներին, կիսում անհայտ կորած ու գերեվարված հայորդիների հարազատների վիշտն ու տառապանքը, շուտափույթ ապաքինում մաղթում վիրավորում ստացած մեր բոլոր հայրենակիցներին:

Արցախը մնաց առանց հայի: Ժամանակավոր:

Լռություն, անհույս սպասումներ, կոտրված սրտեր, անորոշություն...

Շատերն առանց որևէ ապրանքի, հագուստի մտան Հայաստան: Ի՞նչ անել, ո՞ւր գնալ, որտե՞ղ է ապահով, ինչպե՞ս ոտքի կանգնել, ինչպե՞ս շարունակել ապրել, բնակվել, աշխատանք գտնել...

Դիմեցին բոլոր հնարավոր կառույցներին՝ պետական հաստատություններին, բարեգործական հիմնադրամներին, կազմակերպություններին, բոլոր նրանց, ովքեր գոնե մի քիչ կթեթևացնեին ուղեկցող ցավը:

«Արմինյան Քրիշչըն Միշըն» հիմնադրամը հնարավորության սահմաններում նույնպես օգնության ձեռք մեկնեց իրեն դիմող հայրենակիցների՝ առաջնային խնդիրները հոգալու համար: Հիմնադրամը 2023 թ.-ի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին կազմակերպեց վեց հանդիպում Երևան և Գյումրի քաղաքներում: Իրագործվեցին հոգեբանական և քրիստոնեական քաջալերանքի ծրագրեր, որոնց մասնակցեց արձանագրված թվով 373 արցախահայ, ներառյալ ընտանիքի մյուս անդամները:

Նվիրվեցին սնունդի փաթեթներ, առաջին անհրաժեշտության հիգիենայի պարագաներ, մանկական տաք հագուստ, դպրոցական պայուսակներ՝ համալրված գրենական պարագաներով, և գործված ծածկոցներ: Ցանկացողները որպես նվեր ստացան նաև Աստվածաշունչ և քրիստոնեական գրականություն:

Այս դժվարին ժամանակաշրջանում պետք է դառնանք առավել միասնական, համախմբված ու վճռական: Հայկական պահենք մեր ժառանգությունը: Հույսով ու հավատով բացենք 2024 թվականի առաջին էջը՝ որպես ոտքի կանգնելու, ապրելու, հարատևելու, հաղթանակի ու ձեռքբերումների նոր էջ:

Աղոթենք, որ մեր հայրենակիցները մխիթարվեն, կարողանան հավատալ, վստահել Տիրոջը կյանքում ու ապագայի ծրագրերում և գտնեն իրական, ճշմարիտ խաղաղություն Աստծո մեջ:

Անժելա Հարությունյան